ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թ.-ի նոյեմբերի 14-ից 19-ը Ղրղզստանի Հանրապետության Օշ քաղաք գործուղման մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Մատինյան
   Ստեփան Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի իրականացման աջակցման և արարողակարգի բաժնի պետ
   ՀՀ ՊԵԿ ՄՀՎ մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ղրղզստանի Հանրապետություն, քաղաք Օշ, 15.11.2022-19.11.2022թթ.
   Ղրղզստանի Հանրապետություն, քաղաք Օշ, 14.11.2022-19.11.2022թթ.

4. **Հրավիրող կողմը.**
   Ղրղզստանի Հանրապետություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Ղրղզական Հանրապետության կողմից 29.05.2014թ. ԵԱՏՄ պայմանագրին միանալու կապակցությամբ արդյունավետ մաքսային հսկողություն իրականացնելու համար անցումային բոլոր կետերի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության անհրաժեշտ պայմանների ապահովման պարտավորության կատարման ուսումնասիրություն:

6. **Քննարկված թեմաները.**

   Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության անցումային կետերի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության ուսումնասիրություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   14.11.2022թ. Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության Հարավ-Արևմտյան մաքսատան խորհրդակցությունների

սենյակում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում ԵՏՀ և ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչների և Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության Հարավ-Արևմտյան և Բիտկեն մաքսատների ղեկավար անձնակազմի միջև՝ համատեղ իրականացվելիք ուսումնասիրությունների (մոնիտորինգի) առաջադրանքի և իրականացման պայմանների քննարկման նպատակով: Արդյունքում համաձայնեցվեցին ուսումնասիրության իրականացման եղանակը և հաշվետվության ձևը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատանքային խմբի կողմից այցելություններ են իրականացվել Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության ավտոմոբիլային՝ Կիզիլ-Կիյա, Իրկեշտամ, Դոստուկ և երկաթուղային՝ Կարա-սուու, Կիզիլ-Կիյա, Ջալալ-Աբադ և Շամալդի-Սայ անցումային կետեր: Ուսումնասիրության ընթացքում իրականացված այցելությունների արդյունքում պարզվել է, որ Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության կողմից իրականացվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները վերը նշված անցումային կետերը մաքսային հսկողության համար անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական միջոցներով ապահովելու, անձնակազմի կողմից դրանք պրակտիկայում կիրառման համար:
Ուսումնասիրության ավարտից հետո 18.11.2022թ. կազմվել է հաշվետվություն իրականացված մոնիտորինգի վերաբերյալ, որտեղ ամեն անցումային կետի մասով նշվել են իրականացված գործողությունները: Հաշվետվությունը ստորագրվել է աշխատանքային խմբի բոլոր մասնակիցների կողմից:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայությանը առաջարկվել է ամեն տարվա կտրվածքով իրականացնել անցումային կետերում գործող մաքսային հսկողության սարքավորումների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը, դրանք աշխատանքային վիճակում պահելու հետ կապված տեխնիկական սպասարկումը, ապահովել անձնակազմի մասնագիտական պատշաճ մակարդակի հետագա աճը և որակավորման բարձրացումը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

22.11.2022